

ութէն ինչուան տասուերկու օր կը մնան ջրին մէջ . իսկ հունտ ունեցողները գէթ տասնըհինգ օր կը թողուն ջրին մէջ, որովհետեւ արեւուն մէջ երկայն ատեն կենալով խէժը կրկարծրանայ ու դիւրաւ չուծուիր . վազուկ ջուրը աւելի աղէկ է : Հունտ չունեցող կանեփը որ հասունցած ատենը քաղուած է՝ հինգ օր միայն ջրի մէջ թողուլ է երբոր օդին տաքութիւնը Սէնտիւրի ջերմաչափով 20° է . շատ հարկաւոր բան է՝ որ քանի որ թելերը փտած չեն՝ խէժը լուծուի :

Չրէն հանելուն պէս պէտք է որաները քակել ու դաշտի մէջ տարածել որ չորնան . թէ որ աղէկ հով փչէ, եօթը ութը օրուան մէջ կը չորնայ . երբոր կը նայիս որ աղէկ մը չորցեր է՝ խոշոր որաներ կապէ, ու տար շտեմարանին մէջ դիզէ :

Պեղձը՝ երկայն արէն պահելու հնար :

Պեղձը, քթանի խծուծի՝ մէջ պըլլէ, ու ետքը հալած դեղին մեղրամովի մէջ թաթխէ ու դուրս հանէ : Սեղրամովը քթանին վրայ կձեպի պէս չորնալով՝ չեղողը որ դրսի օդը դեղձին զարնուի . աս կերպով երկայն ատեն դեղձերը առանց փտելու կը մնան, միայն թէ դրած տեղը չոր պիտի ըլլայ : Սրիչ սր և իցէ պտուղներ ալ աս կերպով կրնան պահուիլ, ինչպէս նաև հաւկիթը :

Սեխը՝ ինչուան դեկտեմբեր և յունուար ամիսները պահելու հնար :

Սեխն ետքերը ելած սեխերէն առ՝ քանի որ չեն հասունցած, լաթով աղէկ մը սրբէ ու չորցուր, և մէկ եր-

1 Ըեֆուսի : 2 Իսպի-իի : 3 Գալուսի :

կու օր չոր տեղ մը դիր : Յետոյ շատ մը մոխիր առ՝ մաղէ, որպէս զի ածուխին մաքրները զատուին . ետքը ան մաղած մոխիրը աղէկ մը չորցուցած տակառի մը մէջ լեցուր, և ասոր մէջ թաղէ սեխերը . բայց նայէ որ ամէն կողմէն ալ ծածկուին, ու տակառին փայտին չգըպին . աս ալ դիտէ որ տակառը այնպիսի տեղ չգրուի որ կարենայ սառիլ : Երբոր պէտք ըլլայ գործածել, կը տեսնես որ շատ աղէկ պահուեր են սեխերը առանց փտելու՝ ինչուան դեկտեմբեր և յունուար ամիսները :

ՃԱՐՏԱՐՈՒԹԻՒՆ

Փայֆոն կամ Էհի արծաթ :

Չրերը ուրիշ շատ գիւտերէն զատ՝ աս գիւտս ալ հնարած են, որ մէկ քանի մետաղ, այսինքն նիքել, զինք ու պղինձ, երբեմն ալ նաև կապար ու երկաթ մէկտեղ բաղադրելով՝ նոր տեսակ ձերմակ մետաղ մը հանեցին՝ փայֆոն անուանով, որ արծրութի պէս մաքուր ու փայլուն կ'ըլլայ . և հիմա Եւրոպացիք ալ կը շինեն աս կէ դրգալ, ափսէ, պատառաքաղ, դանակի կոթ, և այլն : Բայց աս գործիքներուն բաղադրութեան ամենուն նուսխան նոյնպէս չէ . զոր օրինակ դրգալին ու պատառաքաղին նուսխան է

Table with 2 columns: Ingredient and Amount. Կեքել 0,25; Զինք 0,25; Պղինձ 0,50

Պանակի կոթի, քթառիչի՝ ևն,

Table with 2 columns: Ingredient and Amount. Կեքել 0,22; Զինք 0,23; Պղինձ 0,55

Փայֆոնը թիթեղի պէս թերթ թերթ շինելու համար պէտք է

Table with 2 columns: Ingredient and Amount. Կեքել 0,20; Զինք 0,25; Պղինձ 0,55

1 Մոսկովա :

Իսկ ան գործիքներն որ աս մետաղէն կը շինուին, և անագով պիտի կպցըւին, ինչպէս են աշտանակները՝ պէտք է անոնց բաղադրութիւնն ըլլայ

Նիքել	0,20
Չինք	0,20
Պղինձ	0,57
Կապար	03

Եւ թէ որ փաքֆոնին հետ հազարին երեսուն կամ քսանուհինգ երկաթ կամ պողպատ՝ խառնուելու ըլլայ, մետաղը աւելի կը ճերմըկնայ, բայց ան ատենը շուտով կը կարծրանայ ու դիւրաւ կը կոտորի. անոր համար պէտք է նախ երկաթը պղնձի հետ հալեցընել:

Իսկ թէ որ պէտք ըլլայ փաքֆոնի կտորուանքը նորէն հալեցընել, ան ատեն մէջը հարիւրին ու թէն ինչուան հարիւրին չորս զինք խառնուելու է, որպէս զի ցնդած զինքին մասանցը տեղը բռնէ: Արովհետեւ փաքֆոնին բաղադրութեան մէջ կը մտնէ նաև քիչ մը արսենիք, անոր համար ու մանք ըսին թէ աս մետաղը կերակուրի մէջ մտնելով կը թուճաւորէ զկերակուրը. բայց Ի իպիկ ու հարսէ բնագէտները փորձեցին որ արծրթէն ալ քիչ է ասոր փնասը: Մանաւանդ թէ փաքֆոնը աս օգուտս ալ ունի, որ միայն քացախի, եղի, աղի, անուշադրի՝ ու աղցանի՝ մէջ մտնելով՝ մէկէն կը ցուցընէ իրեն փնասակար ըլլալը, վասն զի երեսի կողմը մէկէն կը սենայ. ընդհակառակն արծաթը թէ որ կերակուրի մը փնաս տալու ըլլայ՝ դրսէն ամենեւին այլայլութիւն մը չցուցընէր:

Փաքֆոնէ շինուած գործիքները թէ որ աղտոտին՝ մաքրելու համար ոսկերիչները սովորաբար սնկաքար՝ կը գործածեն. և թէ որ 100 մաս ջրի մէջ 14 մաս ծծմբային թթուուտ՝ խառնուելու ըլլայ, արծրթի գոյն ալ կ'առնէ:

Արհեստներու ճորվել սամարի գունով ներկելու, կամ գեղեցիկացընելու հնար:

Երբ որ մորթ մը կ'ուզես անանկ փայլեցընել որ երկար ատեն փայլունութիւնը պահէ, յախճապակիէ՝ ամանի մը մէջ զուտ արծաթը լուծէ ժանտաջրով՝. ան լուծմունքը դիր տաք մոխրի վրայ, ու թող որ ցամքի: Ետքը մնացած գիրտը աւ, ու նորէն լուծէ զտաճ ջրի մէջ, ու ապակիէ ձագարով՝ մը թղթէ անցուր:

Եւ ընելէդ ետքը նորէն տաքցուր զտուած ջուրը որ գոլորչի դառնայ, ինքիրմէ պաղի ու կամաց կամաց բիւրեղանայ. անկէ ետքը բիւրեղները զատէ ու անանկ դիր որ քամուին. աս կերպով բոլոր բիւրեղները ժողվէ, լայն բերնով ապակիէ ամանի մէջ դիր. և խիստ մաքուր ջրի մէջ լուծելէդ ետքը, մէջը սպունգ մը թաթխէ, ու անով թրջէ մուշտակը կամ մորթը ու արևու մէջ թող, կը տեսնես որ չորնալէն ետև իրեն բնական գոյնին վրայ շագանակի գոյն մըն ալ կ'առնէ ու մասնաւոր փայլունութի մը կ'ուռնանայ. աս փայլունութիւնը խիստ երկայն ատեն կը դիմանայ, ու մորթը ամենեւին չցեցոտիր:

Եւ անտաջրին բիւրեղանալու ատենը կը տեսնես որ չափ մը կայ որ բիւրեղ ձևանալը կը դադրի, թէպէտև դեռ շատ հեղուկ մնացած ըլլայ ամանին մէջ: Եւ մնացած ջուրը պէտք չէ թափել. վասն զի քուրայի՝ մէջ ցամքեցընեսնէ՝ հալած արծաթի բուրակուտ կը դառնայ, որ շատ բանի կուգայ:

- 1 Ֆարֆուրի :
- 2 Քելուպ :
- 3 Խուսի :
- 4 Փոթա :

- 1 Համբան :
- 2 Չէկի :
- 3 Նիլաբուր :
- 4 Սալաթա :
- 5 Փոմպու :
- 6 Չաճեաղ :